ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» ապրիլի 2019 թվականի N: 120-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 100-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանի N 1 հավելվածի 3.3-րդ, 3.10-րդ, 3.11-րդ, 3.12-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզպետարանի սոցիալական աջակցության Արթիկի տարածքային գործակալության պետի 2019 թվականի մարտի 28-ի N Ե-011 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի անհատական կազմում Արթուր Մկրտչյանի փոխարեն ընդգրկել Էդգար Բզնունուն:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի

հունիսի 30-ի N 264-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 100-Ա որոշման հավելվածում «Արթուր Մկրտչյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի Արթիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Էդգար Բզնունի – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի Արթիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջին կարգի մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող» բառերով:

Իսկականի հետ ճիշտ է

ՏԵՂԵԿԱՏՎՈՒ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ